



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ 17(308) 28.10.2016թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ</b>		
211	««Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-24-Ն օրենքը.....	2
212	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-25-Ն օրենքը.....	4
213	««Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-26-Ն օրենքը.....	5
214	«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ԼՂՀ ՀՕ-27-Ն օրենքը.....	6
<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
215	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մի շարք համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները հետաձգելու մասին» ԼՂՀ կառավարության N 614-Ն որոշումը.....	14
216	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 900-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 620-Ն որոշումը.....	17
217	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2016 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ԼՂՀ կառավարության N 638-Ն որոշումը.....	21

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի  
սեպտեմբերի 29-ին

### «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-198 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ հոդվածի 1-ին մասի և 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության «արտադրության» բառը փոխարինել «արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման)» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 13-րդ պարբերության «տարածմանը» բառը փոխարինել «տարածման կանխարգելմանը» բառերով.

2) 16-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«հատուկ հատկացված տեղեր»** թափոնների գործածության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված վայրեր՝ թափոնների տեղաբաշխման տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, արդյունաբերական հրապարակներ, պոչամբարներ, արտադրական լցակայանների, մակաբացման ապարների տեղամասեր.».».

3) 27-րդ պարբերության վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

**«ընդերքօգտագործման թափոններ»**՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարներ և այլ թափոններ.

**մակաբացման ապարներ**՝ հանքամարմինները կողքերից պարփակող և վրայից ծածկող, ինչպես նաև հանքամարմինների սահմաններում գտնվող դատարկ ապարներ և ոչ հաշվեկշռային պաշարներից դասվող օգտակար հանածոներ, որոնք ենթակա են դեպի հատուկ հատկացված տեղեր փոխադրման.:

**Հոդված 4.** Օրենքի 8-րդ հոդվածի «թ» կետում, 17-րդ հոդվածում և 21-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում «թափոններ արտադրողներ» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «թափոններ առաջացնողներ» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:

**Հոդված 5.** Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Վտանգավոր թափոններ առաջացնողները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և հաստատում են ոլորտում լիազորված մարմնի հետ համաձայնեցված թափոնների անձնագրերը.:

**Հոդված 6.** Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարումն իրականացնում է բնապահպանության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը, որին թափոններ առաջացնող, վերամշակող և օգտահանող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում ներկայացնում են ռեեստրային գրանցման հաշվետվություն.:

**Հոդված 7.** Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 16. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարումը**

1. Թափոնների հեռացման վայրերի (ինչպես գործող, այնպես էլ փակված կամ կոնսերվացված) հաշվառման և նկարագրման նպատակով բնապահպանության բնագավառում պետական կառավարման

լիազորված մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է թափոնների հեռացման վայրերի ռեեստրը:

2. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման նպատակով թափոնների տեղադրման, վնասագերծման և թաղման գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում բնապահպանության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմին են ներկայացնում ռեեստրային գրանցման թերթիկ:

3. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի տվյալները ենթակա են ամենամյա ճշգրտման:»:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ՝**

**Բ.ՍԱՀԱԿՅԱՆ**

2016թ. հոկտեմբերի 13  
Ստեփանակերտ  
ՀՕ-24-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի  
սեպտեմբերի 29-ին

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի նոյեմբերի 27-ի ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասում 34-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ և 36-րդ կետեր.

«35) **ընդերքօգտագործման թափոններ**՝ կիրառվում են այն իմաստով, որը սահմանված է «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով.

36) պոչամբար՝ օգտակար հանածոների հարստացման արդյունքում առաջացած պինդ կամ հեղուկ թափոնների պահման հիդրոտեխնիկական կառուցվածք:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «արդյունաբերական» բառը փոխարինել «արդյունաբերական (ընդերքօգտագործման)» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 13  
Ստեփանակերտ  
ՀՕ-25-Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2016 թվականի  
սեպտեմբերի 29-ին

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-47 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե ռեզիդենտի (բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնողների, ինչպես նաև վերակազմակերպված կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից ձևավորած ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովին հայտ ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում հիմնադրի (մասնակցի) փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ, ապա սվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ հայտ ներկայացնելու տարում և դրան հաջորդող երկու տարիներին՝ 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:».

2) չորրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածով նախատեսված արտոնությունը տարածվում է միայն այն ներդրումների վրա, որոնք ուղղվում են արտադրական բնույթի հիմնական միջոցների ձեռքբերմանը (կառուցմանը):».

3) հինգերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն հոդվածով նախատեսված արտոնությունը կիրառվում է միայն մեկ անգամ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքի 38-րդ հոդվածով սահմանված արտոնությունից օգտված և օգտվող կազմակերպությունների վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ՝**

**Բ.ՄԱՀԱԿՅԱՆ**

2016թ. հոկտեմբերի 13  
Ստեփանակերտ  
ՀՕ-26-Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2016 թվականի  
սեպտեմբերի 29-ին

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը սահմանում է բնապահպանական վճարների (այսուհետ՝ վճար) դրույքաչափերն ու դրանց հաշվարկման կարգը:

**Հոդված 2. Շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետելու դիմաց վճարի դրույքաչափերը**

1. Վնասակար նյութերն օդային ավազան արտանետելու համար վճարների դրույքաչափերն են՝

1) ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման յուրաքանչյուր տոննայի դիմաց՝

փոշի	1 800 ՀՀ դրամ
ածխածնի մոնօքսիդ	240 ՀՀ դրամ
ազոտի օքսիդներ (վերահաշված ըստ ազոտի երկօքսիդի)	14 800 ՀՀ դրամ
ծծմբային անհիդրիդ	1 800 ՀՀ դրամ
քլոր	12 000 ՀՀ դրամ
քլորոպրեն	90 000 ՀՀ դրամ.

2) սույն մասի 1-ին կետում նշված վնասակար նյութերից բացի, վճարի օբյեկտ են հանդիսանում նաև հաշվետու ժամանակաշրջանում օդային ավազան փաստացի արտանետված մթնոլորտային օդն աղտոտող մյուս բոլոր այն նյութերը, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված արտանետումների ծավալը, կամ որոնց մասով հաշվառման ենթակա օբյեկտներ ունեցող կազմակերպությունների գծով բացակայում են օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները:

Սույն կետում նշված մթնոլորտային օդն աղտոտող բոլոր նյութերի համար վճարի դրույքաչափը (Դօդ) յուրաքանչյուր տոննայի արտանետման դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Դօդ} = 900 \text{ ՀՀ դրամ} / \text{ՄԹԿ},$$

որտեղ ՄԹԿ-ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա).

3) Ստեփանակերտ քաղաքում, ազգային պարկերի տարածքներում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ամրակայված աղբյուրներ ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար սույն մասի 1-ին կետում նշված և (կամ) 2-րդ կետի համաձայն հաշվարկվող դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ.

<b>Ավտոտրանսպորտային միջոցի խումբը</b>	<b>Ավտոտրանսպորտային միջոցի ենթախումբը</b>	<b>Դրույքաչափը (ՀՀ դրամ)</b>
Մարդատար՝ Մ	Մ1՝ ուղևորների փոխադրման համար նախատեսված թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք, բացի վարորդի տեղից, ունեն 8-ից ոչ ավելի նստատեղ	<b>2 500</b>
	Մ2՝ ուղևորների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ (ներքին այրման շարժիչներով ավտոբուսներ), որոնք, բացի վարորդի տեղից, ունեն 8-ից ավելի նստատեղ, և որոնց առավելա-	<b>5 000</b>

	գույն զանգվածը չի գերազանցում 5 տոննան	
	Մ3՝ ուղևորների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ (ներքին այրման շարժիչներով ավտոբուսներ), որոնք, բացի վարորդի տեղից, ունեն 8-ից ավելի նստատեղ, և որոնց առավելագույն զանգվածը գերազանցում է 5 տոննան	<b>10 000</b>
Բեռնատար՝ Ն	Ն1՝ բեռների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ, որոնց առավելագույն զանգվածը չի գերազանցում 3,5 տոննան	<b>5 000</b>
	Ն2՝ բեռների փոխադրման համար նախատեսված՝ 3,5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 12 տոննա առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	<b>10 000</b>
	Ն3՝ բեռների փոխադրման համար նախատեսված՝ 12 տոննայից ավելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	<b>15 000.</b>

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված և շահագործվող Մ և Ն ենթախմբերի ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ դրանց խմբերի և ենթախմբերի՝

5) սույն մասի 4-րդ կետում նշված դրույքաչափերի վրա կիրառվում են հետևյալ բազմապատիկ գործակիցները՝

բենզինային շարժիչով մինչև 1986 թվականի հոկտեմբերի 1-ը արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>1.2</b>
բենզինային շարժիչով չեզոքացման համակարգ չունեցող 1986 թվականի հոկտեմբերի 1-ից հետո արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>1.0</b>
բենզինային շարժիչով երկբաղադրիչ չեզոքացման համակարգ ունեցող ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>0.3</b>
բենզինային շարժիչով եռաբաղադրիչ չեզոքացման համակարգ ունեցող ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>0.15</b>
դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>1.0</b>
գազային շարժիչով մինչև 2000 թվականի հուլիսի 1-ը արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>0.5</b>
գազային շարժիչով 2000 թվականի հուլիսի 1-ից հետո արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար	<b>0.35.</b>

6) ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված և շահագործվող S ենթախմբի մեքենաներից (մեխանիզմներից) և լողամիջոցներից վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ շարժիչի հզորության՝

մինչև 50Ձ	10xՁ ՀՀ դրամ
50-80Ձ	20xՁ ՀՀ դրամ
81-100Ձ	30xՁ ՀՀ դրամ
101-150Ձ	40xՁ ՀՀ դրամ
151-200Ձ	50xՁ ՀՀ դրամ
201-250Ձ	60xՁ ՀՀ դրամ
251-300Ձ	70xՁ ՀՀ դրամ
300Ձ-ից ավելի	100xՁ ՀՀ դրամ,

որտեղ Ձ-ն հզորությունն է՝ արտահայտված ձիաուժով.

7) այլ պետություններում հաշվառված Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն մուտք գործող կամ շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ դրանց տեսակի և բեռնատարողության՝

Ծածկագիրը՝ ըստ արտաքին	Ավտոտրանսպորտային միջոցի նկարագիրը	Դրույքաչափը (ՀՀ դրամ)
---------------------------	---------------------------------------	-----------------------

տնտեսական գործունեության սպարանքային անվանացանկի			
		Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի	
		նորմաների սահմաններում կատարվող արտանետումների դեպքում	նորմաների սահմաններից ավելի՝ վերոգրյալ նյութերից առնվազն մեկի գծով արտանետումների դեպքում
8703 21-8703 33	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված մինչև 10 մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար	<b>3 750</b>	<b>7 500</b>
8702	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված 10 և ավելի մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների	<b>10 000</b>	<b>20 000</b>
8704 21 8704 31	բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ոչ ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	<b>5 000</b>	<b>10 000</b>
8704 22 8704 32	բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 20 տոննա առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	<b>10 000</b>	<b>20 000</b>
8704 23	բեռների փոխադրման համար՝ 20 տոննայից ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	<b>15 000</b>	<b>30 000:</b>

2. Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների յուրաքանչյուր տոննայի արտանետման դիմաց վճարի դրույքաչափերն են՝

1) կախված նյութեր	5 300 ՀՀ դրամ
ազոտ ամոնիակային	5 100 ՀՀ դրամ
թթվածնի կենսաբանական պահանջ	18 400 ՀՀ դրամ
նավթամթերք	204 600 ՀՀ դրամ
պղինձ	1 023 900 ՀՀ դրամ
ցինկ	1 023 900 ՀՀ դրամ
սուլֆատներ	100 ՀՀ դրամ
քլորիդներ	30 ՀՀ դրամ
նիտրիտներ	511 500 ՀՀ դրամ
նիտրատներ	1100 ՀՀ դրամ
ընդհանուր ֆոսֆոր	40 000 ՀՀ դրամ



դետերգենտ (լվացող քիմիական) նյութեր  
 ծանր մետաղների աղեր  
 ցիան և ցիանի միացություններ

102 300 ՀՀ դրամ  
 511 500 ՀՀ դրամ  
 511 500 ՀՀ դրամ.

2) սույն մասի 1-ին կետում նշված վնասակար նյութերից և միացություններից բացի, վճարի օբյեկտ են հանդիսանում նաև հաշվետու ժամանակաշրջանում ջրային ավազան փաստացի արտանետված մյուս բոլոր այն վնասակար նյութերը և միացությունները, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով սահմանված կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալները, կամ բացակայում են արտահոսքի գծով ջրօգտագործման թույլտվությունները կամ ջրօգտագործման թույլտվություններով չեն սահմանված թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալներ:

Սույն կետում նշված բոլոր վնասակար նյութերի և միացությունների համար վճարի դրույքաչափը (Դջուր) յուրաքանչյուր տոննայի արտանետման դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Դջուր} = 10\ 000 \text{ ՀՀ դրամ} / \text{ՄԹ}^4 \Delta \text{կն},$$

որտեղ ՄԹ<sup>4</sup>Δկն-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա).

3) Սարսանգի ջրամբարի ջրահավաք ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետումներ իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար (բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների) սույն մասի 1-ին կետում նշված և (կամ) 2-րդ կետի համաձայն հաշվարկվող դրույքաչափերը կրկնապատկվում են:

**Հոդված 3. Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման դիմաց վճարի դրույքաչափերը**

1. Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի սահմանված կարգով տեղադրման (պահման) համար վճարի դրույքաչափերն են՝

1) հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) թափոնների տեղադրման համար՝

առաջին դասի վտանգավորության թափոններ	48 000 ՀՀ դրամ
երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24 000 ՀՀ դրամ
երրորդ դասի վտանգավորության թափոններ	4 800 ՀՀ դրամ
չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1 500 ՀՀ դրամ
ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող և հողածածկույթի քանդման ու շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների)	600 ՀՀ դրամ
լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոններ	0 ՀՀ դրամ
հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոններ	60 ՀՀ դրամ.

2) արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման (պահման) համար՝

	Դրույքաչափը՝ ըստ տեղադրման ժամանակահատվածի (ՀՀ դրամ)		
	Թափոնների առաջացման պահից հաշվարկված մինչև մեկ տարի պահման դեպքում (տեխնոլոգիական փուլ, կուտակում)	Թափոնների առաջացման պահից հաշվարկված մեկ տարուց մինչև երեք տարի ներառյալ պահման դեպքում	Թափոնների առաջացման պահից հաշվարկված երեք տարուց ավելի պահման դեպքում
առաջին դասի վտանգավորության	0	16 000	48 000

թափոններ			
երկրորդ դասի վտանգավորության թափոններ	0	8 000	24 000
երրորդ դասի վտանգավորության թափոններ	0	1 600	4 800
չորրորդ դասի վտանգավորության թափոններ	0	500	1 500
ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնաարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոնների)	0	200	600:

**Հոդված 4. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի դրույքաչափերը**

1. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի դրույքաչափերն են՝

Ծածկագիրը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ապրանքի համառոտ անվանումը	Դրույքաչափը	
		Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար՝ ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ, տոկոսով	Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող և իրացվող ապրանքների համար՝ դրանց իրացման շրջանառության նկատմամբ, տոկոսով
2707 2709 00 2710 2713 2714 90 000 2715 00 000	հանքային յուղեր, հում նավթ և հում նավթամթերք, նավթ և նավթամթերք, վառելիքաքսուրային նյութեր, մայրածյուր և ասֆալտ (բացառությամբ 2710 11 410, 2710 11 450, 2710 11 490 ծածկագրերով դասակարգվող բենզինի, 2710 19 930 ծածկագրով դասակարգվող էլեկտրական մեկուսիչ յուղերի և 2710 91 000, 2710 99 000 ծածկագրերով դասակարգվող օգտագործված նավթամթերքի)	2.0	2.0
2710 19 930 2710 91 000 2710 99 000	էլեկտրական մեկուսիչ յուղեր, օգտագործված նավթամթերք	3.0	3.0
2903 41 000 2903 42 000 2903 43 000 2903 44 100 2903 44 900	ֆտորեռաքլորմեթան (ֆրեոն-11), [CFCl <sub>3</sub> ] երկֆտորերկքլորմեթան (ֆրեոն-12), [CF <sub>2</sub> Cl <sub>2</sub> ] եռֆտորեռաքլորմեթան (ֆրեոն-113), [C <sub>2</sub> F <sub>3</sub> Cl <sub>3</sub> ] քառաֆտորերկքլորմեթան (ֆրեոն-114), [C <sub>2</sub> F <sub>4</sub> Cl <sub>2</sub> ] հինգֆտորքլորմեթան (ֆրեոն-115), [C <sub>2</sub> F <sub>5</sub> Cl]	2.0	2.0

2903 46 100	երկֆտորբրոմքլորմեթան (հալոն-1211) [CF <sub>2</sub> BrCl]	2.0	2.0
2903 46 200	եռֆտորբրոմմեթան (հալոն-1301) [CF <sub>3</sub> Br]		
2903 46 900	քառֆտորերկբրոմմեթան (հալոն-2402) [C <sub>2</sub> F <sub>4</sub> Br <sub>2</sub> ]		
3215 11 00 3215 19 000	տպագրական ներկ	3.0	3.0
3402	լվացող նյութեր	0.5	0.5
3701 3702 3704 00 100 3705 3706	կինո-ֆոտո ժապավեններ	0.8	0.8
3819 00 000	արգելակման հեղուկներ	2.0	2.0
3820 00 000	հակասառեցնող և հակասառցա- պատող հեղուկներ պատրաստի	2.0	2.0
3923 3925 10 000	պլաստմասսայից արտադրանք ապրանքների փաթեթավորման և տեղափոխման համար, 300լ ծավալից ավելի ցիստեռներ, բաքեր և համանման տարողու- թյուններ պլաստմասսայից	2.0	2.0
4011 4012	անվադողեր	1.0	1.0
4013	ռետինե օդախցիկներ	1.0	1.0
6811 6812 6813	արտադրանք ասբեստից, ֆրիկցիոն նյութեր, (բացա- ռությամբ 6813 10 100 և 6813 90 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0	3.0
7019	ապակյա մանրաթել	0.8	0.8
78	կապար և կապարից պատ- րաստված արտադրանք	3.0	3.0
8311 10	էլեկտրոդներ	1.5	1.5
8421 23	ներքին այրման շարժիչների յուղի կամ վառելիքի ֆիլտրեր (բացառությամբ 8421 23 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.0	1.0
8506 30	առաջնային մարտկոցներ սնդիկ- օքսիդային	1.5	1.5
8506 40	առաջնային մարտկոցներ արծաթ-օքսիդային	1.5	1.5
8506 80	առաջնային մարտկոցներ այլ	1.5	1.5
8507 10 8507 20	մարտկոցներ կապարային (բացառությամբ 8507 10 100 և 8507 20 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0	3.0

8507 30 8507 80	մարտկոցներ կադմիում-նիկելային, մարտկոցներ այլ (բացառությամբ 8507 30 100 և 8507 80 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	2.0	2.0
8507 90	մարտկոցների մասեր (բացառությամբ 8507 90 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.5	1.5
8532 22 000	էլեկտրոլիտիկ կոնդենսատորներ	3.0	3.0
8539 31	լյումինեսցենտային լամպեր թերմակատողով	3.0	3.0
8539 32 100	սնդիկային լամպեր	3.0	3.0
8702, 8703, 8704, 8705	5 տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	2,0	x
8702, 8703, 8704, 8705	10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	10,0	x
8702, 8703, 8704, 8705	15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	20,0	x:

**Գ Լ ՈՒ Խ 2**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Հոդված 5. Շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետելու դիմաց վճարի հաշվարկման կարգը**

1. Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերին համապատասխան:

2. Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված և շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից (մեխանիզմներից) և լողամիջոցներից վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարը հաշվարկվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դրույքաչափերին համապատասխան և վճարվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև դրանց տարեկան տեխնիկական զննությունը:

3. Այլ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարը հաշվարկվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերին համապատասխան և վճարվում է «Բնապահպանական և

բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման դիմաց վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույքաչափերին համապատասխան, բացառությամբ սույն մասի 2-րդ պարբերությունում նշված դեպքի:

Ձկնաբուծության նպատակով ջրօգտագործող և ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի և միացությունների արտանետումներ իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար վճարները հաշվարկվում են նրանց կողմից ջրային ռեսուրս արտանետվող կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների միջին կոնցենտրացիաների ու ջրային ռեսուրսի տվյալ հատվածի համար սահմանված ջրի որակի էկոլոգիական նորմերի 90 տոկոսի դրական տարբերության, ջրային ռեսուրս արտանետվող կեղտաջրերի փաստացի ծավալների և սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալի չափով: Ջրի որակի էկոլոգիական նորմերը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 6. Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման դիմաց վճարի հաշվարկման կարգը**

1. Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման (պահման) դիմաց վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերին համապատասխան:

**Հոդված 7. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի հաշվարկման կարգը**

1. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերին համապատասխան:

**Գ Լ ՈՒ Խ 3**

**ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-134 օրենքը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ.ՄԱՀԱԿՅԱՆ**

2016թ. հոկտեմբերի 13  
Ստեփանակերտ  
ՀՕ-27-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2016թ.

N 614-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մեկնարկած սահմանադրական բարեփոխումների գործընթացը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջ առն է:**

1. Մինչև 2017 թվականի ապրիլի 16-ը հետաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նախատեսվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 14-ի N 172-Ն որոշմամբ հետաձգված:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ մինչև նորընտիր համայնքների ղեկավարների լիազորությունների ստանձնումը համապատասխան գյուղական համայնքներում օրենքով սահմանված կարգով նշանակել համայնքների ղեկավարների պաշտոնակատարներ:

3. Սահմանել, որ ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվող համայնքներում ավագանու անդամները շարունակում են իրենց գործառույթների իրականացումը՝ մինչև օրենքով սահմանված կարգով նոր ավագանիների ընտրությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ,  
 ՈՐՈՆՑՈՒՄ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ը ՀԵՏԱԶԳՎՈՒՄ ԵՆ  
 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/Հ	Համայնքներն ըստ շրջանների	Ընտրվող մարմինը	
		Համայնքի ղեկավար	Ավագանի
	<b>Ասկերանի շրջան</b>		
1	Ակնաղբյուր	Համայնքի ղեկավար	
2	Ավետարանոց	Համայնքի ղեկավար	
3	Դահրավ	Համայնքի ղեկավար	
4	Խրամորթ	Համայնքի ղեկավար	
5	Ծաղկաշատ	Համայնքի ղեկավար	
6	Հովսեփավան	Համայնքի ղեկավար	
7	Նախիջևանիկ	Համայնքի ղեկավար	
8	Նորագյուղ	Համայնքի ղեկավար	
9	Շոշ	Համայնքի ղեկավար	
10	Սառնաղբյուր	Համայնքի ղեկավար	
11	Վարդաձոր	Համայնքի ղեկավար	
12	Փառուխ	Համայնքի ղեկավար	
13	Քոասնի	Համայնքի ղեկավար	
	<b>Հաղրութի շրջան</b>		
1	Հաղրութ	Համայնքի ղեկավար	
2	Առաջամուղ	Համայնքի ղեկավար	Ավագանի
3	Թաղասեռ	Համայնքի ղեկավար	
4	Թաղուտ	Համայնքի ղեկավար	
5	Մարիամաձոր	Համայնքի ղեկավար	
6	Մոխրենես	Համայնքի ղեկավար	
	<b>Մարտակերտի շրջան</b>		
1	Կուսապատ	Համայնքի ղեկավար	
2	Կոճողոտ	Համայնքի ղեկավար	
3	Մաղավուզ	Համայնքի ղեկավար	
4	Նոր Կարմիրավան	Համայնքի ղեկավար	
5	Նոր Մարաղա	Համայնքի ղեկավար	
6	Նոր Սեյսուլան	Համայնքի ղեկավար	
	<b>Մարտունու շրջան</b>		
1	Աշան	Համայնքի ղեկավար	
2	Զարդանաշեն	Համայնքի ղեկավար	Ավագանի
3	Զիվանի	Համայնքի ղեկավար	Ավագանի
4	Սոս	Համայնքի ղեկավար	Ավագանի
5	Վազգենաշեն		Ավագանի
6	Վարանդա	Համայնքի ղեկավար	Ավագանի
7	Քարահունջ	Համայնքի ղեկավար	
8	Քերթ	Համայնքի ղեկավար	
	<b>Շահումյանի շրջան</b>		
1	Զուար	Համայնքի ղեկավար	
2	Չարեքտար	Համայնքի ղեկավար	
3	Քարվաճառ	Համայնքի ղեկավար	
4	Քնարավան	Համայնքի ղեկավար	Ավագանի
	<b>Շուշիի շրջան</b>		
1	Եղցահող	Համայնքի ղեկավար	

2	Հին շեն	Համայնքի ղեկավար	
3	Շուշի	Համայնքի ղեկավար	
4	Քարին տակ	Համայնքի ղեկավար	
5	Քիրսավան	Համայնքի ղեկավար	
	<b>Քաշաթաղի շրջան</b>		
1	Արծվաշեն	Համայնքի ղեկավար	
2	Գետալի		Ավագանի
3	Երիցվանք	Համայնքի ղեկավար	
4	Լեռնահովիտ	Համայնքի ղեկավար	Ավագանի
5	Ծիծեռնավանք	Համայնքի ղեկավար	
6	Ծոբաձոր	Համայնքի ղեկավար	
7	Կովսական	Համայնքի ղեկավար	
8	Կումայրի	Համայնքի ղեկավար	
9	Հակ	Համայնքի ղեկավար	Ավագանի
10	Ձորալի	Համայնքի ղեկավար	
11	Մամարք	Համայնքի ղեկավար	Ավագանի
12	Մոշաթաղ	Համայնքի ղեկավար	
13	Վակունիս	Համայնքի ղեկավար	Ավագանի
14	Վարդաբաց	Համայնքի ղեկավար	Ավագանի
15	Վուրգավան	Համայնքի ղեկավար	

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2016թ.

N 620-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման NN 1, 2 և 3 հավելվածների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 6-ի ՀՕ-23-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
	Տարի
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>(3 000 000,0)</b>
<i>այդ թվում՝</i>	
<b>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</b>	<b>(3 000 000,0)</b>

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015  
 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
				Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>700 000,0</b>
			<i>այդ թվում՝</i>	
<b>03</b>			<b>ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ          ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>	<b>(50 000,0)</b>
	<b>3</b>		<b>Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն</b>	<b>(50 000,0)</b>
		<b>2</b>	Իրավական պաշտպանություն	(50 000,0)
		<b>03</b>	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	(50 000,0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	(50 000,0)
<b>04</b>			<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>(270 000,0)</b>
	<b>2</b>		<b>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</b>	<b>(170 000,0)</b>
		<b>1</b>	Գյուղատնտեսություն	(170 000,0)
		<b>12</b>	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	(170 000,0)
			ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	(170 000,0)
	<b>9</b>		<b>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</b>	<b>(100 000,0)</b>
		<b>1</b>	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(100 000,0)
		<b>02</b>	Նյութական ռեսուրսների ԼՂՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	(100 000,0)
			ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	(100 000,0)

06			<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՕՍՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	(80 000,0)
	3		<b>Ջրամատակարարում</b>	(80 000,0)
		1	Ջրամատակարարում	(80 000,0)
		01	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	(80 000,0)
			ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	(80 000,0)
10			<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	(600 000,0)
	2		<b>Ծերություն</b>	(400 000,0)
		1	Ծերություն	(400 000,0)
		04	Օրենքով և ԼՂՀ Նախագահի հրամանագրով սահմանված կենսաթոշակներ և դրամական պարգևատրումներ	(50 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	(50 000,0)
		06	Անենամայա դրամական օգնություններ և պարգևավճարներ	(350 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	(350 000,0)
	4		<b>Ընտանիքի անդամներ և զավակներ</b>	(50 000,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	(50 000,0)
		15	Քաղաքացիների խնայողությունների ինդեքսավորման ծախսեր	(50 000,0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	(50 000,0)
	7		<b>Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)</b>	(20 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	(20 000,0)
		04	Ամենամայա դրամական օգնություններ և պարգևավճարներ	(20 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	(20 000,0)
	9		<b>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	(130 000,0)
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	(130 000,0)
		02	Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ	(30 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	(30 000,0)
		10	Պետական աջակցություն Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամին	(100 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	(100 000,0)
11			<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՈՍՎՈՂ ՕՍՈՒՍԵՐ</b>	1 700 000,0
	1		<b>ԼՂՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդեր</b>	(700 000,0)
		1	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	(700 000,0)
		01	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	(700 000,0)
			ԼՂՀ կառավարություն	(700 000,0)
	2		<b>Այլ ծախսեր</b>	2 400 000,0
		1	Այլ ծրագրեր	2 400 000,0
		01	Կապիտալ ներդրումներ	2 700 000,0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	2 700 000,0
		02	Հանրապետական միջոցառումների (միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ) իրականացման ծրագրեր	(20 000,0)
			ԼՂՀ կառավարություն	(20 000,0)
		04	Տոնական օրերի միջոցառումներ	(30 000,0)
			ԼՂՀ կառավարություն	(30 000,0)
		06	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	(250 000,0)
			ԼՂՀ կառավարություն	(250 000,0)

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ</b>	<b>Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)</b>
	<b>Տարի</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3 700 000,0</b>
այդ թվում՝	
<b>Փոխառու գույք միջոցներ</b>	3 700 000,0
<b>1. Վարկերի և փոխառվածությունների ստացում</b>	3 700 000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016թ.

N 638-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ  
ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
(ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ) ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 172 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում տեղի ունեցող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ**  
**ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը, այդ թվում՝	հազար հեկտար, որից՝ ոռոգվող	
	1143,27	14,595
<b>1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդն՝ ըստ նպատակային նշանակության</b>		
<b>ա. գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝</b>	<b>593,0524</b>	<b>14,355</b>
վարելահողեր	142,32296	11,857
բազմամյա տնկարկներ	9,55425	0,867
խոտհարքներ	35,367	
արոտներ	373,46192	0,856
այլ հողատեսքեր	32,34627	0,775
<b>բ. բնակավայրերի հողեր, որից՝</b>	<b>27,39831</b>	<b>0,24</b>
տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	17,4792	0,24
<b>գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր</b>	<b>4,96886</b>	
<b>դ. էներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր</b>	<b>3,32446</b>	
<b>ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր</b>	<b>5,21684</b>	
<b>զ. հատուկ նշանակության հողեր</b>	<b>40,93643</b>	
<b>է. անտառային հողեր, որից՝</b>	<b>460,58239</b>	
անտառ	253,6464	
թփուտ	142,34451	
խոտհարք	0,04145	
արոտ	42,10	
այլ հողատեսքեր	22,45	
<b>ը. ջրային հողեր</b>	<b>5,42591</b>	
<b>թ. պահուստային հողեր</b>	<b>2,36483</b>	
<b>2) հողային ֆոնդն՝ ըստ սեփականության սուբյեկտների՝</b>		
ա. քաղաքացիների	39,581	0,228
բ. իրավաբանական անձանց	1,796	
գ. համայնքային	150,561	0,606
դ. պետական	950,54	13,761
ե. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց	0,382	

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ